

Սինօդը որոշել է եկեղեցական և վանքական ազատ գումարներով զինել զինուորական փոխառութեան արժէթղթեր:

* *

Կիւի շրջանի հոգևորականութեան յայտարարուած է, որ պէտք է այդ շրջանում տեղաւորուեն 15,000 գաղթական ռումիններ: Կոնսիստորիաները պէտք է հոգևորականներին պատուիրեն, որ ժողովրդին յորդորեն գաղթականներին եղբայրական օգնութեան հասնեն՝ սնունդ ու ապաստարան մատակարարելով:

Կ Ա Ք Ո Լ Ի Կ Ե Կ Ե Ղ Ե Ց Ի .

Նոյեմբերի 1-ին (ն. տ.) կաթոլիկ եկեղեցին կատարում է «Ամենայն սրբոց» տօնը: Փարիզում այդ օրը զնում են գերեզմատուն և իրենց մերձաւորների գերեզմանների վրայ ծաղիկներ, պսակներ են դնում:

Այս պատերազմի սկզբից այդ օրը ազգային բնաւորութիւն է ստացել: Գնում են պատերազմում ընկած զինուորների գերեզմանների վրայ պսակ դնելու և քաղաքացիք և պաշտօնական անձինք:

Այս տարի գերեզմանատուն գնացողների թիւը շատ մեծ է եղել: Հանրապետութեան Նախագահն էլ այցելել է պատերազմում ընկած զինուորների գերեզմանները և պսակներ դրել:

Այդ օրը գերեզմանատուն է գնացել 746,000 մարդ: Մերձաւոր թիկունքի զինուորներն ևս այդ օրը իրենց ընկերների յիշատակին հոգեհանգիստ, պատարագ են անել տուել բոլոր դաւանութիւնների ծէսերի համաձայն. դրուել են պսակներ:

* *

Հռոմում ապրող մի քանի ազգեցիկ լեհեր պաշտօնապէս դիմել են պապին և բողոքել, որ Գերմանիան Լեհաստանի անկախութիւնը հրատարակելով լեհական զօրաժողով է անում: Պընդողներ կան, որ Վատիկանը մճռել է չճանաչել Լեհական նոր թագաւորութիւնը:

* *

Լեհաստանի կաթոլիկ հոգևորականութիւնը ուժեղ դիմադրութիւն է ցոյց տալիս գերմանացիների գրաւած ու անկախ յայտարարած լեհական գաւառներից զօրք ժողովելուն: Վարչաւարտ արքեպիսկոպոսը խիստ դատապարտում է գերմանացոյ ծրագիրը:

կրակովի արքեպիսկոպոսն ասել է «Աղաչում եմ Աստծուն, որ լեհ ժողովրդին հասկացնէ, թէ ճիշտ է իր քաղաքական օգուտը և չընկնէ իր առաջ դրած թակարդը: Քահանաները եկեղեցում քարոզում են ընդդէմ դօրաժողովի, որը յօգուտ գերմանացոց է միայն:

ՍԵՐՔԻԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ.

Կօրֆու կղզում ապաստան գտած սերբիական Դիմիտրի միտրօպօլիտը մի նամակով յայտնում է Միխայիլ վարդապետին, որը Մոսկուայում է գտնուում, սերբիական եկեղեցու ներկայ դառն վիճակի մասին:

Միտրօպօլիտը յայտնում է, որ գաղտնի տեղեկութիւն է ստացել, թէ Բօլգարիայում գտնուող սերբ քահանաներից մի մասը վախճանուել է սարսափելի ուղամտոնների մէջ գտնուելու պատճառով, մի մասին էլ բօլգարներն են սպանել: Սերբիայում միացած քահանաները զրկուած են ծխերից, նրանց տեղը բռնել են բօլգար քահանաներ, որոնք սերբ ժողովրդի խղճի և կրօնական հաւատալիքների վրայ սարսափելի բռնութիւն են գործ դնում: Նոյն տեսակի դրութիւն է իշխում և աւստրիացիների գրաւած սերբիական մասում:

Միտրօպօլիտը յոյս է յայտնում հօգօր Ռուսաստանի օգնութեամբ ձմեռը վերադառնալ հայրենիք: Այն ժամանակ մեծ օգնութեան կարիք պիտի լինի. 500 եկեղեցի նորից կառուցանել, եկեղեցական գրքերը, սպասները, զանգերը, որոնք ոչնչացուած են նորից պիտի գնել:

Միտրօպօլիտը խնդրում է դիմել ռուս ժողովրդի եղբայրական օգնութեան և ժողովարարութիւն անել, որ վերադարձից յետոյ հնարաւոր լինի բաւարարել ժողովրդի հոգեւոր կարիքները: